



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2022 թվական, N 41_L

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 15-րդ ենթակետով ու «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 15-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը **որոշում է**.

1. հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի նոր խմբագրությամբ կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից նոր խմբագրությամբ կանոնադրությունը գրանցելու օրվանից:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Ս. Պապիկյան

2022 թ. դեկտեմբեր «28»

Երևան